Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝ Համագործակցային ուսուցում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Արմինե Դավթյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3
Գրական ակնարկ……5
1.Համագործակցային ուսուցման հայեցակարգ……6
1.1 Համագործակցային ուսուցման տեսություն…….14
1.2 Համագործակցային ուսուցման կազմակերպման ձևերը և միջոցները.....10
1.3 Համագործակցային ուսուցման գործնական կիրառությունը ուսումնական գործընթացում……16
Տվյալների վերլուծություն……..16
Եզրակացություն……19
Գրականության ցանկ……20

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն 2 առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը>>:

Բ.Ֆ. Ս ք ի ն ե ր

Ներածություն

Տարբեր ժամանակներում և մարդկության տարբեր զարգացվածության աստիճանների ժամանակ տարբեր են եղել նաև ուսուցման կազմակերպման ձևերը, որոնք տրամաբանորեն ունեցել են իրենց յուրահատկություններն ու առանձնահատկություններն, ինչպես նաև՝ իրենց հրամայականներն ու պահանջները: Հասարակական բոլոր փոփոխություններն անդրադառնում են նաև կրթական համակարգին: Սույն ժամանակահատվածում իրականացվող կրթական մեթոդներն եկել են ապացուցելու, որ նախկինում օգտագործած մեթոդներն այլևս արդի չեն, և մենք կարիք ունենք նոր և այլընտրանքային մոտեցման, ինչպիսին կարող է լինել, օրինակ՝ համագործակցային ուսուցումը: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների ներդրման պայմաններում կրթական ոլորտն ամենօրյա ռեժիմով կարիք ունի բարեփոխումների, որի արդյունքում ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը. վերջինս ևս հնարավորություն է ստանում դառնալու հետազոտող, վերլուծող, քննադատող, փնտրող, սովորեցնող ու կշռադատող: Այսինքն, նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական ճարտարապետը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դառնում է ավելի հետաքրքիր, և սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Սովորողը նմանօրինակ նորարարական հետաքրքիր հնարներով հագեցած դաս պահանջում է բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներից՝ այդ թվում անգլերենի, ուստի կարևոր է, որ անգլերենի ուսուցիչը նույնպես ունենա այն մասնագիտական որակները, որի արդյունքում սովորողների մոտ կարող է զարգացնել միմյանց հետ համագործակցելու, ուսումնառության ընթացքում միմյանց օգնելու, խրախուսելու ու աջակցելու հմտություններ, ինչպես նաև նրանց մեջ սերմանելու ինքնուրույնություն ու նախաձեռնողականություն: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների՝ կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողների՝ միմյանց հետ ճիշտ հաղորդակցվելուն և խմբային աշխատանքի համագործակցական նոր մշակույթ ստեղծելուն:

Այս աշխատանքով ցանկանում եմ ներկայացնել համագործակցային ուսուցման հայեցակարգը և իր մեթոդները գործնականորեն կիրառելու ձևերն ու եղանակները,

ինչպես նաև ուսուցիչներին ծանոթացնել այս մեխանիզմի հետ, որից օգտվելու դեպքում իրենք կհասկանան, որ հիմքը համագործակցության միջոցով ուսումնական խնդիրների լուծման, իրականացման հնարավորություն տալն է: Ցանկանում եմ նաև անդրադառնալ համագործակցային հնարներին, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը, ինչը կարևոր է հատկապես երկրորդ օտար լեզու սովորող ցանկացած աշակերտի համար:

Հետազոտության նպատակը: Շեշտադրել համագործակցային ուսուցման կարևորությունը անգլերենի դասաժամերին՝ որպես աշակերտին մոտիվացնելու հիմնական նախապայման՝ այդ գործընթացում կարևորելով ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ֆունկցիոնալ դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների որակի բարձրացման համատեքստում: Ուսումնասիրել համագործակցային ուսուցման հայեցակարգը, առանձնացնել դրա տեսական դրույթները և ներկայացնել համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությունը:

Այս նպատակից բխում են սույն ***խնդիրները***՝

- Առանձնացնել և ներկայացնել համագործակցային ուսուցման բնույթն ու առանձնահատկությունները:
- Նշել և անդրադառնալ համագործակցային մեթոդների հնարավոր տարբերակներին, կազմակերպման ձևերին ու փուլերին:
- Մատնանշել համագործակցային ուսուցման գործնական կիրառման հնարավորությունը և անհրաժեշտությունը:

Գրական ակնարկ

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելը Անգլիայում կիրառում էր սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկապվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության ներկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկապվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը: Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկապվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկապվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: [Ամիրջանյան 2005: 188-189]: Իսկ Ջերոմ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը մոտիվացիա է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1.1 Համագործակցային ուսուցման տեսություն

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս (Վարդումյան 2005:175): Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը պետք է ներգրավված լինի ուսուցման մեջ, որի արդյունքում նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի միջոցով հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային ուսուցման ժամանակ աշակերտներից յուրաքանչյուրը միտված է փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ: Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Համագործակցային ուսուցման ժամանակ փոխվում է ուսուցչի դերը. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի: Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝ Ուսուցիչը՝

- պլանավորում է դասերը, վարժություններն ու առաջադրանքները
- ձևավորում է սովորողների խմբերը
- տեղաբաշխում է սովորողներին
- ներկայացում ու բացատրում է առաջադրանքը
- հսկում է խմբային աշխատանքը և անհրաժեշտության դեպքում միջամտում, սովորողներին օգնում սոցիալական հմտությունների զարգացման հարցում և գնահատում:

Ուսուցման կազմակերպման ձևերը տարբեր ժամանակներում տարբեր են եղել: Դրանք կախում են ունեցել տվյալ հասարակարգի սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտադրողական, արտադրական հարաբերություններից,

հասարակության կողմից դպրոցին ներկայացվող պահանջներից, գիտությունների և տեխնիկայի զարգացման միտումներից և բազմաբնույթ այլ հանգամանքներից: Վաղ ժամանակներում հին աշխարհի երկրներում՝ Հին Եգիպտոս, Հին Չինաստան, Հին Հնդկաստան, Հին Հունաստան և այլն, ուսուցման կազմակերպման առաջին ձևը եղել է անհատական ուսուցումը, որը պահպանվել է մինչև տասնութերորդ դարը: 15-16-րդ դարերում եվրոպական մի շարք երկրներում կրթությանը ներկայացվեցին մի շարք պահանջներ, և շուտով հանդես եկավ խմբային ուսուցումը: Ուսուցման այս ձևը տեսականորեն հիմնավորեց չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին: (Ամիրջանյան 2005:188-189):

Մեր երկրում կրթական համակարգը, կազմակերպում է սովորողների համատեղ ուսուցում (միևնույն կրթական հաստատությունում, նույն դասարանում), և ուսուցման գործընթացը կառուցում է առավելապես ուսուցչի կողմից անհատական ուսուցման սկզբունքով: Առաջանում է հակասություն ուսուցման համատեղ բնույթի և մանկավարժական ներգործության իրականում անհատական ուղղվածության միջև: Այս հակասության լուծման ճանապարհին ստեղծվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ու կատարելագործման բազմաթիվ ձևեր ու մոդելներ: Դրանցից մեկը վերջին ժամանակներս բավականին շատ քննարկվող ու արծարծվող համագործակցային ուսուցման մոտեցումն է, որի ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ- ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:(Վարդումյան2005:175):

Ըստ Ջոնսոնների գոյություն ունեն համագործակցային ուսուցման հինգ տարրեր՝

1.Դրական փոխկախվածություն
2.Դեմ առ դեմ փոխազդեցություն
3.Անհատական հաշվետվություն
4. Սոցիալական հմտություններ
5. Խմբային գործընթաց



Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման վերոնշյալ տարրերը:

1. *Դրական փոխկախվածություն.* Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ։Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, որի արդյունքում նրանց մեջ ձևավորվում է հանդուրժողականություն և վստահություն:
2. *Դեմ առ դեմ փոխազդեցություն.* Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ և օգնելով իրար՝ հասնում ընդհանուր նպատակին։
3. *Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.* Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։
4. *Սոցիալական հմտություններ.* Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը։
5. *Խմբային գործընթաց.* Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական

հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հավանաբար, շատ ուսուցիչների համար համագործակցային ուսուցման մեջ ամենադժվարը բավարար ինքնավերահսկողությունն է՝ աշակերտներին իրենց սեփական հայտնագործությունները կատարելու և սեփական խնդիրները լուծելու համար հնարավորություններ ստեղծելու ընթացքում: Որոշ ուսուցիչներ հեշտությամբ գայթակղվում են միջամտել, երբ աշակերտները համաձայն չեն մեկը մյուսի հետ: Ուսուցչի միջամտությունը կարող է լինել միայն վերջում՝ թույլ տալով աշակերտներին լուծել իրենց հակասությունները սեփական ուժերով և ընկերների օգնությամբ: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը: Ժամանակի բաշխումը հատկապես կարևոր է համագործակցային ուսուցման արդյունավետությունն ապահովելու գործում, երբ աշակերտները կատարում են տարբեր առաջադրանքներ, տարբեր տեղերում, տարբեր զույգերի/խմբերի հետ: Այս բոլորը հաստատում են, որ ուսուցիչը կարևոր դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում. ձևավորում է սովորողների խմբերը, պլանավորում առաջադրանքները, սահմանում է առաջադրանքների կատարման պայմանները և ժամկետները, գնահատման ձևերն ու դրանց կիրառման ուղիները: Այլ խոսքով՝ կազմակերպում է ուսուցումը: Այսպիսի մոտեցումը առաջ է բերում նաև աշակերտի դերի փոփոխություն: Ուսուցման սկզբնական փուլում ուսուցչի ուշադրությունը հիմնականում ուղղված է համագործակցային մեթոդների կիրառմանն ու կատարելագործմանը: Աշակերտները սկսում են հարմարվել մոտեցումներին և ըմբռնել նորարարությունները: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դասավանդման բովանդակությունը մղվել է երկրորդ պլան, սակայն շատ կարճ ժամանակ անց նկատվում է բովանդակության և ակադեմիական նպատակների իրականացման վերելք: Կիրառման սկզբնական շրջանում ուսուցման համագործակցային մեթոդները կարող են անարդյունավետ թվալ: Համբերատարությունն ու հաստատակամությունը կօգնեն հասնելու ուսուցման ակադեմիական բարձր արդյունքների: Ի վերջո, և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները կդառնան նոր մշակույթի կրողները: Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառությունը մարտահրավերային է և հետաքրքիր: Դա նաև դժվար է և ժամանակատար: Նոր մոտեցումը կարող է մեծ էներգիա պահանջել, «սակայն արդյունքը կփոխհատուցի ջանքերը»:

Հարկավոր է խմբեր կազմելիս սահմանել կանոներ և այդ կանոներով առաջնորդվել մշտապես:

Պասի Սալիբերգի կարծիքով՝ փոքր խմբային աշխատանքն ունի առնվազն երեք առավելություն.

■ Ամենից առաջ այն նպաստում է ուսումնական նյութի բովանդակային կողմի ընկալման բարելավմանը, գիտելիքների երկարաժամկետ մտապահմանը,

հասկացությունների, սկզբունքների, երևույթների ու իրադարձությունների ըմբռնմանն ու յուրացմանը: Սա, թերևս, կարելի է բացատրել ուսուցման գործընթացում խոսելու, քննարկելու և փոխազդելու լայն հնարավորությամբ:

■ Փոքր խմբային աշխատանքը հնարավորություն է ընձեռում սովորողներին հանդես գալ այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք իմացական նպատակներին հասնելուն համընթաց կարող են զարգացնել նաև սոցիալական, հաղորդակցական հմտություններ:

■ Համագործակցային աշխատանքը ձևավորում է դրական դիրքորոշում, նպաստում ուսումնառության նկատմամբ սովորողների տեսակետների, մոտեցումների և արժեքների բարելավմանը:

Վերլուծելով վերը նշված տեսակետները և ամփոփելով ուսումնասիրության թեմայի տեսական հիմքը՝ ամբողջացնենք, որ համագործակցային ուսուցումը և ուսումնառությունը ենթադրում են ուսումնական խնդիրների իրականացում, մասնակիցների սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության և համագործակցության միջոցով՝ հանձնարարված խնդիրների կատարմամբ:

1.2 Համագործակցային ուսուցման կազմակերպման ձևերը և միջոցները

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը (Հովհաննիսյան 2006:29):

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան իմաստավորվում է որպես համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտերի զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական փուլերի՝ (1) ուսումնական նյութի նախապատրաստում, (2) աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին, (3) բուն ուսումնական աշխատանքի ընթացքը:

(1) Ուսումնական նյութի նախապատրաստական փուլում կատարվում է՝

1.ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների

2.լրացուցիչ նյութի ընտրություն

3.թիմային աշխատանքի տեսակի ընտրություն:

(2) Աշակերտների նախապատրաստումը համատեղ աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման փուլում կատարվում է՝

1.Ուրիշին լսելու կարողությունների ձևավորում,
2.Ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում,
3.Սեփական կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում,
4.Անհրաժեշտ ինֆորմացիա հայթայթելու կարողությունների ձևավորում,
5.Մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում,
6.Վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունների ձևավորում,
7.Եզրահանգումներ կարատելու կարողությունների ձևավորում և այլն:

(3) Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել՝

1.Փոխադարձ ուսուցում ուսուցիչ – աշակերտ դերային խաղի տեսքով,
2.Զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղեկատվության որոնման տեսքով
3.Փոքր և մեծ խմբերով յուրացման և որոնողական աշխատանք կազմակերպելու միջոցով:

Ուսուցման այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է՝

1.Ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ավելի լավ է յուրացվում և մտապահվում ուսումնական նյութը,
2.Տրամաբանական մտածողության զարգացմանը,
3.Խթանում է ուսման բարձր ճանաչողական դրդապատճառների ձևավորմանը,
4.Ինքնուրույն գիտելիքներ ձեռքբերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
5.Ուրիշներին գնահատելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
6.Նպատակներ ձևավորելու և դրանց իրականացնելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
7.Համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
8.Վերլուծելու, համադրելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
9.Ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդներով վարվող դասերի անցկացումը պահանջում է առանձնահատուկ մոտեցում և առանձին մասնագիտական հմտություններ, որոնցից առավել կիրառականները ներկայացնում ենք ստորև: 1. Աշակերտների թիմային առաջադիմության խմբավորումներ (Student Teams Achievement Divisions. STAD)

Այս մեթոդը մշակվել է Ռոբերտ Սլավինի և նրա գործընկերների կողմից Ջոն Հոփքինսի համալսարանում և ՀՈՒ պարզագույն մոտեցումն է: Ուսուցիչը աշակերտներին բաժանում է 4-5 անդամից բաղկացած ուսումնական խմբերի: Հատկանշական է, որ այդ խմբերում ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կարողությունների տեր աշակերտների ընդգրկելը կարևոր նախապայման է (Վարդումյան2003:177):

Թիմի անդամները սկզբից կարդում են թերթիկների վրա զետեղված առաջադրանքը, սերտում հանձնարարված նյութերը, ապա օգնում միմյանց ավելի լավ յուրացնել տվյալ

նյութը մեկը մյուսին ուսուցանելու, հարցեր տալու և թիմի անդամների միջև քննարկումներ ծավալելու միջոցով: Այս աշխատանքները գնահատվում են «ըստ աշակերտի առաջադիմության», այսինքն՝ նշանակված գնահատականն արտացոլում է, ոչ թե աշակերտի բացարձակ գնահատականը, այլ առաջադիմության այն աստիճանը, որ նա ցուցաբերել է նախորդ աշխատանքների միջինի համեմատությամբ:

2. Խճանկար (Jigsaw)

Այս մեթոդը մշակվել և փորձարկվել է Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից Տեխասի համալսարանում և այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Աշակերտներին հարկավոր է բաժանել 5 կամ 6 անդամ ունեցող ոչ միատարր ուսումնական խմբերի: Ուսումնական նյութերը ներկայացվում են տեքստի ձևով և յուրաքանչյուր աշակերտի հանձնարարվում է սովորել նյութի մի որոշակի հատվածը միայն: Օրինակ՝ եթե նյութը համագործակցային ուսումնառության մասին է, ապա սովորողներից մեկին կհանձնարարվի աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը, մյուսին՝ խճանկարի մեթոդը, մեկ այլ աշակերտի՝ խմբային հետազոտության մեթոդը, իսկ վերջին երկուսը գուցե ՀՈՒ պատմության և գիտահետազոտական հիմքի փորձագետներ կդառնան: Միևնույն առաջադրանքը ստացած աշակերտները հայտնվում են ոչ թե նույն այլ տարբեր խմբերի կազմում: Այնուհետև տարբեր թիմերի՝ նույն թեման ուսումնասիրող անդամները (փորձագիտական խմբեր) հանդիպումներ են կազմակերպում՝ գիտելիքներ փոխանակելու և թեման յուրացնելու գործում միմյանց օգնելու նպատակով: Այնուհետև աշակերտները վերադառնում են իրենց հիմնական խմբերը և ձեռք բերած գիտելիքները սովորեցնում խմբի մյուս անդամներին (Վարդումյան 2003: 177):

Օրինակ՝ անգլերենում սահմանական եղանակի (Indictive mood) ուսուցումը այս մեթոդով ներկայացնելու համար կիրառում ենք ձևից բովանդակության անցման սկզբունքը: Նախապես ընտրված խմբերին տալիս ենք մի քանի բայեր՝ «to sing, to read, to buy, to bring» և այլն: Յուրաքնաչյուր խմբի տրվում է որևէ ժամանակաձևի կազմության գծապատկեր՝ ինչպես՝ Simple Present, Present Continuous, Past Simple, Present Perfect, իսկ վերջում՝ Past Perfect Tense ժամանակաձևի կազմության գծապատկերը: Առաջին խումբը փորձում է գրել Simple Present ժամանակաձևի համապատասխան բայերի դրական և ժխտական ձևերը, ապա կազմում նախադասություններ, իսկ մյուս խումբը գրում է Past Simple ժամանակաձևը և այսպես շարունակ: Այնուհետև ժամանակաձևերը ներկայացնելուց հետո նրանք սահմանում են ժամանակային ձևերը՝ ներկա, անցյալ և այլն: Ուսուցչի օգնությամբ յուրաքանչյուր խումբ քննարկում, պարզաբանում է իր «ոլորտին» վերաբերող հարցերը, ապա նյութի այդ մասը սովորեցնում մյուս խմբերին:

3. Խմբային հետազոտություն (Group Investigation)

Այս մեթոդն առաջին անգամ մշակել է Հերբերտ Թելենը: Այն աչքի է ընկնում իր բարդությամբ, որի հետևանքով կիրառելիս դժվարություններ են առաջանում: Մեթոդի էությունը հետևյալն է.

Ուսուցիչը դասարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրության համար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում ու ներկայացնում ամբողջ դասարանին: Մեթոդի հեղինակներ Շարանը և նրա գործընկերները առանձնացնում են հետևյալ վեց քայլերը.

ա) թեմայի ընտրություն

բ) համատեղ պլանավորում

գ) իրագործում

դ) վերլուծություն և համադրում

ե) վերջնական արդյունքների ներկայացում

զ) գնահատում:

Այս հաջորդական քայլերի միջոցով ուսուցիչը ընձեռում է սովորողներին տվյալ թեմայի շուրջ մտածողության ավելի բարձր մակարդակ ձեռքբերելու հնարավորություն: Բացի այդ՝ այս մեթոդի օգնությամբ մենք շահագրգռում ենք սովորողներին և մղում դեպի նորանոր բացահայտումներ՝ խթանելով նաև միմյանցից որևէ բան սովորելու մոտիվացիան:

4. Կառուցվածքային (ստրուկտուրալ) մոտեցում (The structural approach) Այս մոտեցումը, որ մշակվել է Սպենսեր Կագանի (1993, 1998) կողմից, ընդգծում է աշակերտների միջև շփման ձևերի վրա ազդող կառույցների կիրառումը: Այս կառույցները պարտադրում են աշխատել փոքր խմբերով, փոխկախվածության պայմաններում և անհատականացված խրախուսանքի փոխարեն սովորաբար պարգևի են արժանացնում համագործակցային աշխատանքը: Ստորև ներկայացնում ենք այդպիսի կառույցների մի քանի օրինակներ.

ա)«Մտածի՛ր - զույգ կազմի՛ր - գաղափարներդ կիսի՛ր» Այս մեթոդն առանձնացել է համագործակցային ուսումնառությանը և սպասման ժամանակին (wait-time) առնչվող հետազոտությունների արդյունքում: Այն ներառում է 3 փուլ (Վարդումյան 2003:178): Օրինակ ուսուցիչը, ցանկանալով բոլոր կողմերով քննության առնել բացատրված և յուրացված նյութը՝ "Department stores in our town" (7-րդ դասարան), յուրացումը ստուգում է ոչ թե սովորական դարձած հարց ու պատասխանով (զրույցի մեթոդ), այլ դրա փոխարեն առաջարկում է «մտածի՛ր-զույգ կազմի՛ր - գաղափարներդ կիսի՛ր» ռազմավարությունը, որը ներառում է հետևյալ ալգորիթմը.

Քայլ 1-ին. «Մտածի՛ր»: Ուսուցիչը թեմայի շուրջ հարց է տալիս՝ «Ինչպիսի՞ խանութներում եք նախընտրում գնումներ կատարել», իսկ այնուհետև աշակերտներին հանձնարարում է 1 րոպե լուռ մտածել պատասխանի մասին:

Քայլ 2-րդ. «Զույգ կազմի՛ր»: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին մտածում (4-5 րոպե):

Քայլ 3-րդ. «Գաղափարներդ կիսի՛ր»: Դրանից հետո զույգերն ամբողջ դասարանին ներկայացնում են իրենց տեսակետները, քննարկման արդյունքները: Ուսուցիչը տարբեր զույգերի է հրավիրում այնքան ժամանակ, մինչև խոսելու ու սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու հնարավորությունից օգտվեն

մասնակիցների կեսից ավելին:

բ) «Գլուխ գլխի տվեք»

Այս մեթոդի հեղինակը Սպենսեր Կագանն է: Մեթոդը նպատակ ունի դասի ընթացքում ուսումնասիրված նյութը կրկնելու գործընթացում ներգրավել ավելի շատ աշակերտների և ստուգել նյութն ընբռնելու նրանց մակարդակը: Այն բաղկացած է 4 փուլից:

✔ «Համարակալում». այս փուլում աշակերտները հաշվելով 1-ից մինչև 5 բաժանվում են 3 կամ 5 հոգանոց խմբերի:

✔ «Հարցադրում». ուսուցիչը կարող է ուղղել և՛ կոնկրետ (օրինակ՝ «What is the capital of Great Britain?»), և՛ ընդհանուր հարցեր (Համոզվե՛ք, որ յուրաքանչյուր աշակերտ գիտի մայրցամաքներն ու աշխարհամասերը):

✔ «Գլուխ գլխի տվեք, և քննարկեք». աշակերտները համագործակցում են, «գլուխ գլխի են տալիս»՝ տրված առաջադրանքի լուծումը համատեղ գտնելու կամ համոզվելու համար, որ բոլորը գիտեն պահանջվող հարցի պատասխանը:

✔ «Պատասխանի՛ր». Ուսուցիչը բարձրաձայն որևէ թիվ է ասում, ոտքի են կանգնում տվյալ թիվը կրող աշակերտները և պատասխանում հարցին (Վարդումյան 2003:178):

Ինչպես նկատում ենք վերոնշյալ օրինակներից համագործակցային ուսուցման բազմազան մեթոդների կիրառումը պահանջում է նախաձեռնություն և ինքնաուղղորդում, իսկ ուսուցչի վարպետությունը կդրսևորվի այդպիսի աշխատանքներում ամենից առաջ նրա հարցադրումները ճիշտ կատարելու և քննարկումները վարելու ունակություններում:

1.3 Համագործակցային ուսուցման գործնական կիրառությունը ուսումնական գործընթացում

Ինչպես վերը նշեցի, ինձ հետաքրքրում է այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք համագործակցային ուսուցման տարրերը համադրել անգլերենի դասաժամերին: Մենք նպատակ ունենք անուղղակիորեն զարգացնել նաև փոխկապակցվածության սոցիալական որոշակի հմտություններ, խմբային համագործակցային գաղափարներ:

Դասարանը ընտրելիս հաշվի է եմ առել նաև երեխաների միջև եղած փոխհարաբերությունները, նրանց միջև եղած հանդուրժողականությունը: Ընտրվել է 8-րդ դասարանը, որտեղ սովորում է 21 աշակերտ (11 տղա և 10 աղջիկ):

Դասարանում առաջադիմությունը միջին մակարդակի է, ուստի իմ նպատակն է համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մեջ ձևավորել այնպիսի հմտություններ և որակներ, որոնք կհամապատասխանեն մերօրյա պահանջներին, դասարանում կստեղծվեն առողջ հարաբերություններ, բացի դրանից՝ նրանք կկարողանան ձեռք բերածը կիրառել նաև կյանքում: Որպես ուսումնասիրվող նյութ

ես ընտրել եմ “Travelling to Britain” տեքստը (English 8,G.Gasparyan, N. Hovhannisyan, H. Kachberuni)

Դասի շրջանակներում առաջադրել էի հետևյալ նպատակները.

- Աշակերտները պետք է կարողանան անգլերեն լեզվով վերարտադրել Մեծ Բրիտանիայի աշխարհագրական, տարածքային յուրահատկությունները՝ օգտագործելով տեքստում առկա բառերն ու բառային արտահայտությունները տարբեր կոնտեքստերում:
- Վերլուծեն այն առավելությունները և թերությունները, որոնք նպաստում են կամ խոչընդոտում ինդուստրիալ և տնտեսական զարգացմանն ու առաջխաղացմանը, և համեմատականներ անցկացնեն Հայաստանի Հանրապետության հետ՝ նշելով մեր երկրի աշխարհագրական առանձնահատկությունները:
- Տիրապետեն անծանոթ բառերին և արտահայտություններին, որպեսզի կարողանան արտահայտել տեսակետներ, ինչպես նաև մասնակցել խմբակային քննարկումներին:

Նշված նպատակին հասնելու համար կատարել ենք խմբային տարաբնույթ առաջադրանքներ: Ուսուցումը ներկայացվելու է ԽԻԿ համակարգով: Խթանման փուլում կփորձեմ բացահայտել այս թեմայի մասին երեխայի ունեցած գիտելիքները: Դրա համար կօգտագործեմ մտագրոհ մեթոդը:

Իմաստի ընկալման փուլում երեխաներին կբաժանեմ թերթիկներ, որոնց վրա կլինի ուսումնասիրվող նյութը: Կօգտագործեմ ընթերցանությունը որպես մեթոդ: Կշռադատման փուլում կօգտագործեմ քառաբաշան մեթոդը, իսկ ավարտին



կօգտագործեմ կիսատ նախադասության մեթոդը:

1. Դասարանը բաժանում եմ չորս խմբի: Քանի որ վերնագրից անմիջապես հասկանալի է, թե որ երկրի մասին է խոսվելու տեքստում, ապա աշակերտներին գրատախտակին փակցված քարտեզից և Բրիտանիային վերաբերվող հիմնական սիմվոլներից ելնելով՝ չորս խմբերը կփորձեն վերլուծել և կռահել դասի վերնագրի նշանակությունը:

2.Յուրաքանչյուր խմբի տրվում են նկարներ, որոնք կապված են Մեծ Բրիտանիայի հետ: Խմբերի խնդիրն է՝ միմյանց հետ քննարկելով մեկնաբանեն և յուրաքանչյուր նկարի համապատասխանեցնեն միտքը:



Great Britain is an island in the North Atlantic Ocean off the northwest coast of continental Europe. With an area of 209,331 km2 (80,823 sq mi)
London Heathrow is a major international airport in London.
London Gatwick is a major international airport near Crawley, West Sussex, England, 29.5 miles (47.5 km) south of Central London.
The Union Flag, or Union Jack, is the national flag of the United Kingdom. It is so called because it combines the crosses of the three countries united under one Sovereign - the kingdoms of England and Wales, of Scotland and of Ireland
Where is the United Kingdom? Which are the border countries of GB?
The Channel Tunnel (often called the 'Chunnel' for short) is an undersea tunnel linking southern England and northern France. It is operated by the company Getlink, who also run a railway shuttle between Folkestone and Calais, carrying passengers in cars, vans and other vehicles. The Chunnel is actually comprised of three tunnels: two rail tunnels, used for freight and passenger trains, and a service tunnel.
Hovercraft is a vehicle or craft that travels over land or water on a cushion of air provided by a downward blast. A design was first patented by Christopher Cockerell in 1955.

3. Աշխատանքի վերջին փուլում խմբերից մեկը ներկայացնում է Մեծ Բրիտանիայի տնտեսական, աշխարհագրական, արդյունաբերական առանձնահատկությունները, մյուս խումբը՝ ՀՀ առանձնահատկությունները: Այս փուլում աշակերտները պետք է

քննարկման, փոխհամաձայնեցման արդյունքում փորձեն ներկայացնել իրենց տեսակետները: Տեղի է ունենում քննարկում, ինչի արդյունքում վեր են հանվում տարբերությունները, և քննարկվում են այն միջոցները, որոնք կարող են նպաստել ՀՀ արդյունաբերության խթանմանը: Այստեղ սովորողները T-աձև աղյուսակի միջոցով գրում են Հայաստանի և Մեծ Բրիտանիայի նմանություններն ու տարբերությունները:

4. Այնուհետև խմբերին տրվում է առաջադրանք, որտեղ իրենք պետք է յուրաքանչյուր տրված հարցի դիմաց գրեն ճիշտ պատասխանը: Տրվում է որոշակի ժամանակ, որի ընթացքում յուրաքանչյուրը ընթերցում է իր տարբերակը: Ժամանակը լրանալուց հետո խումբը ընտրում է նրան, ով պետք է կարդա պատասխանը/պարտադիր չէ, որ դա լինի ավագը: Խմբի անդամները կարող են լրացում անել, եթե կարծում են, որ ներկայացնողը ինչ-որ կարևոր բան բաց է թողել: Կիսատ նախադասության մեթոդով էլ կամփոփեմ դասը:

Տվյալների մշակում և վերլուծություն

Իմ անցկացրած երկու դասերի արդյունքում իմ կատարած հետազոտությունները, գործընկերներիս դիտարկումները, աշակերտների ինքնագնահատումն ու խմբերի փոխադարձ գնահատումը հնարավորություն է տալիս վերլուծել իմ կատարած աշխատանքը: Համագործակցային ուսուցմամբ դասերը անցկացնելուց հետո աշակերտները լրացրել են հարցաթերթ՝ համագործակցային ուսուցմամբ դասերի վերաբերյալ և ավանդական ուսուցման վերաբերյալ: Հարցաթերթը լրացրել են 21 աշակերտներ, որոնցից 21-ը նշել են, որ հետաքրքիր է դասը և նման չէ մնացած դասերին, 18-ը պատասխանել են, որ լավ են հասկացել, իսկ 3-ը նշել են, որ ոչ այդքան: Քննարկումներն ու դիտարկումները կներկայացվեն դիագրամով, որոնցում հստակ երևում են աշակերտների և խմբերի մասնակցությունը, ակտիվությունը կամ պասիվությունը բոլոր առաջադրանքներում, Փոխադարձ գնահատման սանդղակ .



Աղյուսակ 1 Համագործակցային ուսուցմամբ անցկացված դաս

Աղյուսակ 2 Աշակերտների մասնակցությունը համագործակցային ուսուցմամբ անցկացված դասին



Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ դիտարկումներից, կարող ենք փաստել, որ խմբային աշխատանք կատարելու ընթացքում միասին սովորելով և փորձարկելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հմտություններ՝ սովորողներն ակտիվ կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում ինքնագնահատման և այլ նոր հմտություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քանի որ, ինչպես արդեն նշել ենք, համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքների միջոցով ինքնին փոխներգործություն է, ուստի լեզու օգտագործողը/սովորողը հանդես է գալիս խոսողի և լսողի դերում մեկ կամ մի քանի զրուցակիցների հետ, որպեսզի բոլոր մասնակիցները միացյալ ուժերով և բանակցությունների ճանապարհով կառուցեն խոսույթ քննախոսությունը: Այդպիսի փոխներգործության ընթացքում կարևոր են իմացական և համագործակցության ռազմավարությունները, որոնք վերաբերում են համագործակցության և փոխազդեցության վարմանը, օրինակ՝ խոսակցության ընթացքում խոսք վերցնելն ու զրուցակցին փոխանցելը, խնդրի ձևավորումը և մոտեցման եղանակի հաստատումը, լուծումների առաջադրումն ու գնահատումը, թերության լրացումը՝ համաձայնության գալու ճանապարհով, իսկ ընդհարման դեպքում՝ միջնորդությունը:

Խմբում աշխատելը ունի հետևյալ նպատակները.

✔ ձևավորում է հաղորդակցման հմտություն,

✔ աշակերտները սովորում են միմյանցից,

✔ զարգացնում է աշակերտի պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,

✔ խթանում է թիմային աշխատանքը,

✔ ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

✔ քննարկումների միջոցով ամրապնդում է աշակերտների համոզմունքները, ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ամիրջանյան Յ. Ա., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Երևան 2005
Գյուլնազյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Մ. Ուսուցչի ուղեցույց տետր. Երևան 2009
2.Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս. «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես» հրատ., 2006
3.Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005
4.Jamaludin, M., & Mokhtar, M. F. Students Team Achievement Division. International Journal of Academic Research in Business and Social Sciences, 2018
5.Johnson D., Johnson R., Learning together and alone: cooperative, competitive and individualistic learning. Boston. Allyn and Bacon. 1999, 323
6.Բ. <<Համագործակցային ուսուցում>>Երևան, ձեռնարկ, <<Անտարես>> 2006

Էլեկտրոնային աղբյուրներ

1.Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա // http://chekhov.am/html/2017-2018/metodmiavorumner/tarakan/Tevosyan_Anna/frida.pdf // 23.05.2021; 21:20
2.Խաչատրյան Հ. Համագործակցային ուսուցման և ուսումնառության հոգեբանական առանձնահատկությունները// http://kantegh.asj-oa.am/895/1/208-214.pdf // 20.05.2020; 13:00
3.Հանրակրթության կազմակերպման հիմնահարցեր // http:// www.noravank.am // 20.05.2020; 22:15